

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՊԵԿ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆՈՐ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ, ՈՐՊԵՍ ԷՔՍՊՐԵՍ-ԲԵՌ ՓՈԽԱԴՐՈՂԻ
ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԷՔՍՊՐԵՍ-ԲԵՌՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԿԱՄ ԷՔՍՊՐԵՍ-ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՈՒՂՆՈՐԱՅԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՎՈՂ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ» ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՆԵՐԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1**

ք. Երևան

«24» *փետրվարի* 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Մուրադյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պլանակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **60 000 000 (Վաթսուն միլիոն) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.13 կետով կնքվելիք վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության

պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

ք.Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՎՀՀ 02647057

Հ/Հ 900011030534

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝



ԿԱՏԱՐՈՂ

«Հարմոնիա» տեղեկատվական
տեխնոլոգիաների և կրթության

զարգացման հիմնադրամ

ք. Երևան, Սևաստոպոլյան 45

ՀՎՀՀ 00090751

Հ/Հ 2050022433141001

«Ինեկոբանկ» ՓԲԸ

«Հարմոնիա» տեղեկատվական

տեխնոլոգիաների և կրթության

զարգացման հիմնադրամի տնօրեն՝



Մ. Մուրադյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման
						ժամկետը և հասցեն
1	72261110/501	ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայություններ	դրամ	60 000 000	1	Ներկայացված է տեխնիկական բնութագրում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

ք.Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՎՀՀ 02647057

Հ/Հ 900011030534

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝



ԿԱՏԱՐՈՂ

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ

ք. Երևան, Սևաստոպոլյան 45

ՀՎՀՀ 00090751

Հ/Հ 2050022433141001

«Ինելկոբանկ» ՓԲԸ

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի տնօրեն՝



ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների

Նպատակը՝

ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ՄՄՍՀ) նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի նախագծում, ծրագրավորման ծառայությունների իրականացում և ներդրում:

Մատուցվող ծառայությունների շրջանակ՝

Ապահովել ՀՀ ՊԵԿ ՄՄՍՀ նոր համակարգի նախագծումը, ծրագրավորման ծառայությունների իրականացումը և ներդրումը սույն հավելվածով նախատեսված պահանջներին համապատասխան.

1. Ներածություն

Առկա վիճակ

Ներկայումս մաքսային մարմնի միասնական տեղեկատվական համակարգում բացակայում է որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման միասնական համակարգ, որը բավարարում է ԵԱՏՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Դրանց հայտարարագրումը իրականացվում է փոստային առաքանիների հաշվառման, ուղևորային և ապրանքային հայտարարագրերի միջոցով: Ուստի նոր համակարգը նախագծելիս պետք է հաշվի առնվեն թվարկված ենթահամակարգերում առկա գործընթացները, այն մասով որոնք պետք է տեղափոխվեն և իրականացվեն նոր նախագծվող համակարգում:

1.1. Մասնակիցներ

Էքսպրես բեռների փոխադրման և դրանց հայտարարագրման էլեկտրոնային համակարգի մասնակից և օգտվողներ են հանդիսանում.

- Մաքսային մարմնի ստորաբաժանումները
- Էքսպրես բեռների փոխադրում իրականացնող փոստային, սուրհանդակային կամ էքսպրես բեռների փոխադրում իրականացնող այլ կազմակերպությունները, նրանց աշխատակիցները, ավտոմատացված տեղեկատվական համակարգերը
- Էքսպրես փոխադրումների միջոցով տեղափոխվող ապրանքների ուղարկող կամ ստացող հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձինք
- ԵԱՏՄ անդամ պետությունների այլ մաքսային մարմինները

Մասնակիցները հանդես են գալիս յուրաքանչյուրը բիզնես գործընթացին համապատասխան իրավասությունների շրջանակում համակարգում ունեցած հասանելիությունների մակարդակին համապատասխան:

1.2. Նպատակ

Նախագծի նպատակն է մաքսային մարմնի միասնական տեղեկատվական համակարգում նախագծել և ներդնել էքսպրես բեռների հաշվառման և հայտարարագրման համակարգ, որը համապատասխանում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրության, Հայաստանի Հանրապետության՝ մաքսային կարգավորման և Նշված ոլորտը կարգավորող այլ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Համակարգը հնարավորություն կտա տեղափոխվող բոլոր էքսպրես բեռների նկատմամբ իրականացնել ամբողջական հաշվառում, համապատասխան մաքսային ընթացակարգերով հայտարարագրում, մաքսային հսկողության իրականացում, հաշվետվությունների ավտոմատացում և վերլուծությունների կատարում:

Համակարգի միջոցով է պետք է իրականացվի հետևյալ հիմնական գործառնությունները.

- Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեղափոխվող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրում՝ ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ,
- Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեղափոխվող՝ ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրման ենթակա ապրանքների հայտարարագրում ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կիրառությամբ,
- Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեղափոխվող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների համար ներկայացված, ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի ճշգրտում,
- Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեղափոխվող՝ ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի ճշգրտում, ապրանքների համար ներկայացված, ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի ճշգրտում,
- Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների փոխադրման ընթացակարգերով հայտարարագրման ենթակա էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի ճշգրտում,
- Եքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի ճշգրտում, ապրանքների համար ներկայացված ժամկետներում մաքսային վճարների չվճարման կամ ոչ պատշաճ վճարման համար գանձվող տույժերի հաշվարկման և գանձման համար օրենսդրությամբ սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերի ձևավորման և վարման գործընթացների իրականացումը:
- Բացի վերոգրյալ հիմնական գործառնություններից համակարգը պետք է ապահովի նաև հետևյալ գործառնությունները.
- համակարգի մասնակից հանդիսացող կողմերի համակարգերի հետ ինքնաշխատ տվյալների փոխանակում, փոխանակված տվյալների հիման վրա էքսպրես-բեռների համար հայտարարագրի համապատասխան ձևերի ձևավորում, կարգավիճակների փոփոխում, կարգավիճակների հարցում, պարտավորությունների հաշվարկ, հաշվարկված պարտավորությունների հարցում, պարտավորությունների վճարում:
- պետական կառավարման այլ գերատեսչությունների հետ ինքնաշխատ տվյալների փոխանակում, էքսպրես-բեռների համար հայտարարագրի համապատասխան ձևերում կիրառվող տվյալները նույնականացնելու, ստուգելու նպատակով:
- մաքսային մարմնի միասնական տեղեկատվական համակարգի բոլոր ենթահամակարգերի հետ ինտեգրում, մաքսային մարմնի կողմից ներկայումս կիրառվող բոլոր տրամաբանությունների իրականացման համար:
- ավտոմատացված վճարումների համակարգի ներդրում և ինտեգրում, էքսպրես բեռների գործընթացում հաշվարկված հարկեր/տույքերի էլեկտրոնային եղանակով վճարման համար:

1.3. Հղումներ

Սույն բաժնում ներկայացված են տեխնիկական բնութագիրը կազմելու համար հիմք հանդիսացող բաղադրիչ և հարակից փաստաթղթերը, փաստաթղթի տեքստում օգտագործված տերմինները և հասկանալիները:

1.3.1. Բաղադրիչ փաստաթղթեր

Համակարգի նախագծման համար օրենսդրական հիմնական հիմքեր են հանդիսանում ստորև թվարկվող որոշումները (նրանց վերջին փոփոխություններին համապատասխան տարբերակները): Նախագծված Համակարգը պետք է ամբողջությամբ ներառի և ապահովի սույն որոշումներում նկարագրված բոլոր ընթացակարգերի, բիզնես գործընթացների, գործողությունների և պահանջների էլեկտրոնային(թվային) իրականացումը:

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում համար 142 առ 28.08.2018
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում համար 158 առ 28.08.2018

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հորշում համար 185 առ 20.11.2018
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հորշում համար 48 առ 16.04.2020
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հորշում համար 49 առ 16.04.2020
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հորշում համար 9 առ 22.01.2019

1.3.2. Հարակից փաստաթղթեր

- Համակարգի նախագծելիս՝ բացի 1.4.1 կետում բուն էքսպրես բեռների վերաբերյալ հիմնական օրենսդրական պահանջները, պետք է հաշվի առնվեն նաև ստորև բերվող ոլորտի ընդհանուր կարգավորումները ապահովող իրավական ակտերը:
- Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրք
 - Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենք
 - Մաքսային միության հանձնաժողովի որոշում համար 378 առ 20.09.2010

1.3.3. Հապավումներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՄՄՍՀ	Մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգ
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե

2. Տեղեկատվական համակարգի համառոտ նկարագրություն

2.1. Տեղեկատվական համակարգի համառոտ նկարագրություն

Համակարգը պետք է նախագծվի, որպես համացանցային ծրագրային միջոց և հանդիսանա մաքսային մարմնի միասնական տեղեկատվական համակարգի բաղադրիչ մաս, լինի ինտեգրված բոլոր մյուս ենթահամակարգերին և գործի որպես առանձին ենթահամակարգ:

Համակարգում ստեղծվող էլեկտրոնային փաստաթղթերը՝ էքսպրես-բեռների համար հայտարարագրի համապատասխան ձևերի էլեկտրոնային տեսքերը, նրանց համար ներկայացվող ճշգրտումները և վճարահաշվարկային փաստաթղթերը, իրենցից ներկայացնում են գործընթացին համապատասխան որոշակի կարգավիճակներից, կանոններից, պայմաններից և տրամաբանություններից կառուցված հաջորդականություններ, որոնց մեկից մյուսը անցնելիս հավաքագրվում, պահպանվում, ձևավորվում, պատմագրվում (աուդիտի վարում), մշակվում և փոխանցվում են տվյալների համախմբելու կարգավիճակի համար սահմանված են նաև օգտվողների տեսակներ իրենց համապատասխան դերերով, իրավասություններով և հասանելիություններով:

2.2. Համակարգի գործառնության նկարագրություն

Համակարգում օգտվողների կողմից համապատասխան տվյալների մուտքագրման միջոցով կամ մասնակիցների ավտոմատացված ներքին համակարգերից ստացված տվյալների հիման վրա ձևավորվում է համապատասխան տեսակի էքսպրես-բեռների համար հայտարարագրի համապատասխան ձև: Կցվում են նաև լրացված տվյալների իսկությունը հաստատող կամ այլ փաստաթղթեր:

Էքսպրես-բեռների համար հայտարարագրի համապատասխան ձևերը Համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրության կիրառությամբ, փոխադրողի կամ այլ լիազոր ներկայացուցչի կողմից ներկայացվում է մաքսային մարմիններին գրանցման նպատակով, որի ժամանակ ստուգվում է մուտքագրված տվյալների սահմանված ձևաչափին և կառուցվածքին համապատասխանությունը: Էլեկտրոնային հարցումների միջոցով ստուգվում են նաև այլ գերատեսչությունների տեղեկատվական աղյուսակներում պարունակվող և էքսպրես-բեռների համար հայտարարագրի համապատասխան ձևերում կիրառված տվյալների հավաստիություն ու իսկությունը:

Բոլոր վավերապայմանների բավարարվելու դեպքում էքսպրես-բեռների համար հայտարարագրի համապատասխան ձևը գրանցվում է մաքսային մարմնի կողմից և նրանց վերադրվում է գրանցման համար: Տվյալներում սխալների առկայության կամ նրանց անհամապատասխանության դեպքում մերժման բավարար հիմքերի առկայության պարագայում գրանցումը մերժվում է և ձևավորվում է մերժման արձանագրություն (որոշում):

Գրանցված էքսպրես-բեռների համար հայտարարագիրը անցնում է դիմերի կառավարման համակարգի միջոցով և հիմնվելով նախասահմանված դիմի պրոֆիլների հիման վրա ընտրվում է մաքսային հսկողության ձևը և (կամ) մաքսային հսկողության հսկողության ասպեկտները միջոցը :

Կախված մաքսային հսկողության տեսակից մաքսային մարմին պաշտոնատար անձինք համակարգում արձանագրում են ստուգումների վերաբերյալ տվյալները: Ըստ անհրաժեշտության էքսպրես-բեռների համար հայտարարագիրը սահմանված կարգին համապատասխան ուղարկվում է ճշգրտման և փոփոխված տվյալներով նորից ներկայացվում է մաքսային մարմիններին: Կատարվում են բոլոր գործողությունները ինչպես էքսպրես-բեռների համար հայտարարագիրը առաջին անգամ ներկայացնելիս:

Տվյալների ամբողջական դառնալուց հետո ներկայացված տվյալների հիման վրա հաշվարկվում են հարկեր տուրքերը: Ստեղծվում են համապատասխան պարտավորությունները և ձևավորվում է վճարահաշվարկային փաստաթուղթը, որում արտացոլվում է էքսպրես-բեռների համար հայտարարագրում պարունակվող ապրանքներից յուրաքանչյուրի մասով պարտավորությունները:

Համակարգը վճարումների ավտոմատացած համակարգի միջոցով կամ բանկային վճարումների միջոցով իրականացնում է պարտավորությունների վճարումը և հաստատումը:

Էքսպրես-բեռների համար ներկայացված համապատասխան հայտարարագիրը բաց է թողնվում կամ օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության պարագայում իրականացվում է բացթողման մեթոդով:

2.3. Փոխգործելիությունը այլ համակարգերի և մասնակիցների հետ

Տվյալ բաժնում նկարագրված է նախագծվող համակարգի փոխգործելիությունը այն համակարգերի և մասնակիցների հետ, որոնք անմիջականորեն մասնակցություն և ազդեցություն ունեն այն գործընթացի ավտոմատացման վրա, որի համար նախատեսված է նախագծվող համակարգը: Փոխգործելիության ամբողջական իրականացման համար, նախագծվող համակարգում պետք է նախատեսվեն այնպիսի լուծումներ և ծրագրային, գործիքային հնարավորություններ, որոնք կապահովեն ստորև բերվող համակարգերից յուրաքանչյուրի հետ ինտեգրացում նկարագրված գործընթացները ամբողջությամբ ապահովելու համար: Ստորև բերվում է այդ համակարգերը, նրանց հետ փոխգործելիության և ազդեցությունների համառոտ նկարագիրը.

- ՄՄԱՍՀ-ի կանոնների կառավարման համակարգի հետ փոխգործելիության միջոցով է իրականացվում նախագծվող համակարգում ըստ կարգավիճակների բոլոր տվյալների վավերապայմանների ստուգումները, դաշտերի միջև տրամաբանական կապերի և կախվածությունների ապահովումը, դուրս բերվող նախագգուշացնող և սխալի հաղորդագրությունների ցուցադրումը, հարկեր/տուրքերի հաշվարկը, էլեկտրոնային փաստաթղթի գործընթացների կանցում կամ ինքնաշխատ իրականացում: Թվարկված խնդիրների լուծման համար հարկավոր է որպիսի նախագծվող համակարգի բոլոր տվյալները որպես փոփոխականներ հասանելի լինեն կանոնների կառավարման համակարգում և որոնց հետ հնարավոր լինի կատարել նախասահմանված տրամաբանական և ֆունկցիոնալ գործողություններ, հրահանգներ: Միևնույն ժամանակ նախագծվող համակարգը հետադարձ ստանում է տվյալներ, հրահանգներ, հաղորդագրություններ և հաշվարկներ որոնք պետք է համապատասխանորեն մշակել և մշակման արդյունքին համապատասխան իրականացնել որոշակի գործողություններ:
- ՄՄԱՍՀ-ի տեղեկատվական աղյուսակների կառավարման համակարգի փոխգործելիության շրջանակներում ապահովվում է բոլոր այն տվյալների կիրառությունը նախագծվող համակարգում, որոնք կիրառվում են ոչ թե ազատ մուտքագրման, այլ նախասահմանված արժեքներից ընտրության միջոցով: Նախագծման արդյունքում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ տեղեկատու աղյուսակները պատմագրվող են և պետք է կիրառել էքսպրես-բեռների համար հայտարարագրի պրոցեսինգի ժամանակահատվածում ակտիվ արժեքները: Եթե համակարգի նախագծման ընթացքում ի հայտ կգան տվյալներ, որոնք կիրառվում են ընտրության միջոցով ապա դրանք նույնպես պետք է իրականացվեն տեղեկատվական աղյուսակների կառավարման համակարգում, և միայն դրանից հետո կիրառվեն համակարգում:
- ՄՄԱՍՀ-ի վճարումների կենտրոնացված համակարգում են իրականացվում հաշվարկված հարկեր/տուրքերի պարտավորությունների նկատմամբ հսկողությունը, վճարումների և հաստատումների վարումը: Ինտեգրման արդյունքում հարկավոր է որպիսի էքսպրես-բեռների համար հայտարարագրի պրոցեսինգի ժամանակ հաշվարկված պարտավորությունները փոխանցվեն վճարումների կենտրոնացված համակարգին, կարողանան նրանից ստանալ վճարումների և պարտավորությունների մնացորդների վերաբերյալ տվյալները, մշակեն ստացված հաղորդագրությունները և միայն անհրաժեշտ վճարված լինելուց հետո թույլատրեն հաջորդիվ իրականացվող գործողությունները:
- ՄՄԱՍՀ-ի դիմերի կառավարման համակարգի հետ փոխգործելիությունը ենթադրում է, որ նախագծվող համակարգը պետք է ուղղորդվի դիմերի կառավարման համակարգի հսկողության ակտի ցուցումներով և տրամաբանությամբ, որոնք կախված են ընտրված մաքսային հսկողության ձևից: Ինչ ենթադրում է որ

յուրաքանչյուր ստեղծված էքսպրես-բեռների համար հայտարարագրի հետ հարկավոր է ստեղծել հսկողության ակտ, կարգավիճակների փոփոխության դեպքում նախատեսել հնարավորություն հսկողության ակտում փոփոխությունների կատարելու և հսկողության ակտում նախատեսված ստուգողական տրամաբանությունների արդյունքներից կախված կասեցնել կամ թույլատրել հաջորդիվ իրականացվող գործողությունները:

- ՄՄՄՏՀ-ի օգտվողների կառավարման համակարգի հետ ինտեգրումը ենթադրում է նախագծվող իրականացվող գործողությունները: օգտվողների տեսակների, նախասահմանում, որոնք պետք է հասանելի լինեն օգտվողների կառավարման համակարգում համակարգում համակարգի օգտվողներին տրամադրելու համար: Պետք է նախասահմանված լինեն բիզնես գործընթացին համապատասխան իրավասություններ, հասանելիություններ և ատրիբուտներ, որոնց կառավարումը իրականացվելու է օգտվողների կառավարման համակարգի միջոցով: Կախված վերափոխվելից համակարգի օգտվողին համակարգի որոշ ֆունկցիոնալ կամ տեղեկատվություն ինքաշխատ եղանակով պետք է լինի հասանելի կամ արգելվի տեսանելիությունն ու գործողությունը:
- ՄՄՄՏՀ-ի փաստաթղթերի միասնական արխիվի հետ ինտեգրացիայի արդյունքում նախագծվող համակարգին հասանելի են դրանում արխիվում ավելացված փաստաթղթերը իրենց էլեկտրոնային տեսքերով:
- ՄՄՄՏՀ-ի հաշվետվությունների ձևավորման համակարգի հետ ինտեգրման արդյունքում հնարավորություն է ընձեռնվում ձևավորել և օգտվողներին հասանելի դարձնել հաշվետվություններ, որոնց համար ինքնին հանդիսանում էքսպրես-բեռների համար հայտարարագրի համար ստեղծված տվյալների շտեմարանների արժեքները:
- ՄՄՄՏՀ-ի ապրանքային հայտարարագրի, ուղևորային հայտարարագրի, տարանցման հայտարարագրի, փոստային առաքանիների հաշվառման համակարգի հետ ինտեգրումը ենթադրում է տվյալ համակարգի իրականացման արդյունքում այն պրոցեսների տարանջատում վերափոխվող համակարգերից, որոնք պահանջվում են նոր նախատեսվող բիզնես գործընթացներով և/կամ օրենսդրությամբ:
- ՄՄՄՏՀ-ի օգտվողների գործողությունների պատմագրման համակարգի հետ ինտեգրում, որի միջոցով հավագարվում և պահպանվում է օգտվողների կողմից կատարված գործողությունները և ժամանակագրությունը:
- Էքսպրես բեռների փոխադրում իրականացնող կազմակերպությունների տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրումը ենթադրում է վեր սերվիսի նախագծում և իրականացում, որի միջոցով փոխադրողների տեղեկատվական համակարգերը կարող են տվյալների փոխանցման միջոցով ստեղծել էքսպրես-բեռների համար հայտարարագրերը, հայտարարագրերի մշակման բիզնես գործընթացին համապատասխան փոփոխել նրա կարգավիճակը, իրականացնել մաքսային վճարների հաշվարկի հրահանգ, իրականացնել հաշվարկված մաքսային վճարների ավտոմատ վճարում, կարգավիճակների հարցում:
- ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության գործող վեր սերվիսի հետ ինտեգրում, հայտարարագրի մշակման ժամանակ ներկայացվող անձնագրային տվյալների նույնականացման, ստուգման նպատակով:
- Ինտեգրացիա ԵԱՏՄ անդամ պետությունների միջև վերլուծա-հսկողական տվյալների առցանց և պարբերական փոխանցումների ապահովման նպատակով: Նախագծվող համակարգը պետք է տվյալների շտեմարանում առկա տեղեկատվությունը մշակի և բերի փոխանակման համար պահանջվող կառուցվածքի և ձևաչափի, զետեղի դրանք համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների մեջ և փոխանցի տվյալների փոխանակման միասնական հանգույցին՝ ստացող կողմից սպասելով մշակման վերաբերյալ հաղորդագրությունից հարկավոր է լինելու իրականացնել հաջորդիվ ավտոմատ և/կամ կիսաավտոմատ գործողություններ: Նույն քայլերը կատարվում են մյուս անդամ երկրների մաքսային մարմիններից ստացված էլեկտրոնային հաղորդագրությունների հետ: Դրանք ստացվում են փոխանակման հանգույցից մշակվում են և մշակման արդյունքի վերաբերյալ հետադարձ հաղորդագրություն ուղարկվում:

Ծառայությունների շրջանակ՝

Ստորև ներկայացված են տույն տեխնիկական բնութագրով սահմանված **Ծառայությունների** իրականացման պահանջները.

Նախագծի կառավարման պլանի մշակում՝

Կապալառու ընկերությունը պետք է ներկայացնի նախագծի կառավարման պլան.

ՊԱՀԱՆՁ 1	Նախագծի կառավարման պլանը պետք է ներառի. ▪ նախագծի իրականացման պլան (միջոցառումներ, ժամկետներ, փոխկախվածություններ, ռեսուրսներ)
----------	--

	▪ նախագծի որակի կառավարմամբ պլան (ներառյալ՝ համակարգերի թեստավորման, ընդունման պլան), ▪ ուսուցման պլան, ▪ ռիսկերի կառավարում, ▪ նախագծի կազմակերպչական կառուցվածք:
--	---

Տեխնիկական առաջադրանքի մշակում

Կապալառու ընկերությունը պետք է ներկայացնի էքսպրես բեռների հայտարարագրման համակարգի տեխնիկական առաջադրանքը.

